

Սամվել Ռամազյան, ք. գ. թ.
ՀԱԻ

ՔԱՉԱԼ ՀԱՄԶԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ

Վերջին շրջանի մեր ուսումնասիրությունները հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհում հայ և թյուրք վիպական ավանդույթների կրողները գտնվել են շարունակական շփումների մեջ, որոնց արդյունքում օտարամուտ (թյուրքական) կերպարներ են բացահայտվում «Սասնա ծռեր» էպոսում և հայկական կերպարներ «Քյոռոլի» էպոսում: Ակնհայտ է, որ տեղի են ունեցել որոշ վիպական տարրերի փոխներթափանցումներ:

Հոդվածում ներկայացվում է «Սասնա ծռեր» և «Քյոռոլի» էպոսներում Քաչալ Համգայի կերպարի քննական վերլուծությունը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու նրա ծագումնաբանական արմատները: Հայկական էպոսում Քաչալ Համգան (Լոռա Համգա) ավանդաբար հանդես է գալիս Սասնա ծռերի հակառակորդների շրջանակից (հիմնականում Խանդութի *ուզնկան*), իսկ «Քյոռոլի» էպոսում՝ գլխավոր հերոսի նծույզի առևանգիչ, հակառակորդի լրտես-գործակալ Քյոռոլու խմբում:

Ներկայացվում է նաև Ժ. Դյումեզիլի առաջադրած «կույրի որդու» առասպելույթի հիմնականիսքի համանման տարրերով առկայությունը «Պարսից պատերազմ» հերոսավեպում և «Քյոռոլու» արևմտյան խմբի հիմնական տարրերակներում՝ ակնհայտ դարձնելով ծագումնաբանական կապը: Ընդամենը, «Պարսից պատերազմ» հերոսավեպում որպես Համգայի բացահայտ վիպական նախորդ է հանդես գալիս Փիսակ-Դատաբենի կերպարը, որի ներմուծումը թյուրքական էպոս, ըստ ամենայնի, իրականացվել է թյուրքալեզու հայ աշուղների միջոցով: Հանձնիս «Քյոռոլի» էպոսի որոշ տարրերակներում Քաչալ Համգայի և «Պարսից պատերազմ» հերոսավեպում Փիսակ-Դատաբենի կերպարների՝ ևս մեկ հավելյալ կովան է ի հայտ գալիս «կույրի որդու» առասպելույթի հիմնականիսքի հաստատման համար:

*Հիմնաբառեր*¹՝ «Սասնա ծռեր», «Քյոռոլի» էպոս, Քաչալ Համգա, «Պարսից պատերազմ», Ժորժ Դյումեզիլ:

Վերջին շրջանում «Քյոռոլի» էպոսի թյուրքական տարրերակների ուսումնասիրությունը բացահայտում է հայկական կերպարների և, ընդհանրապես, հայերի հետ կապված դրվագների որոշակի առկայությունը դրանցում¹, ինչը միայն մասամբ կարելի է վերագրել թյուրքալեզու հայ աշուղների ազդեցությանը, ինչպես ժամանակին ենթադրել է հայտնի հետազոտող Փերթև Նախիլի Բորաթավը²:

¹ Ռամազյան 2017, 272–311; 2018, 205–219:

² Boratav 2016, 126.

Հայ վաճառականի (Ermeni Bezirgân) հայտնի կերպարից բացի, թյուրքական պատումներում ընդգծվում է հայկական կերպարների և հատուկ անունների հետ կապված առատությունը: Տարբեր պատումներում հայ են ներկայացվում անգամ Քյոռոզլու որդեգիր Այվազը և Քեչել Համզան (Քիչել Հեմզե), որը երբեմն որպես «հայ Համզա» (Ermeni Hamza) է հիշատակվում³: Ի վերջո, Բորաթավը թյուրքալեզու հայ աշուղների ազդեցությանն է վերագրել հայերի՝ նման հաճախադեպ հիշատակությունները⁴, որի հետ չի համաձայնել հարցի խորագիտակ հետազոտող Հայկ Պերպերյանը (Բերբերյան). «Մեր զգացումը այն է, որ թուրքերեն լեզուով պատմած զրոյցներու և վէպերու մէջ հայ հերոսներու գոյութիւնը արդիւնք չէ հայ աշուղներու ազդեցութեան, այլ հայկական և թրքական զրոյցներու ձուլման, զոր հայ աշուղները կարարած են»⁵: Պերպերյանը ժամանակին իրավամբ եզրակացրել է. «Եթէ հայ աշուղները ազգասիրաբար Հայերու պատուաբեր դերեր վերագրել ուզած ըլլային, ինչպէս կը թուի խորհիլ Պ. Պորաթաւ, Այվազը իբր Հայ չէին» ներկայացներ, որովհետեւ Այվազ շարք ալ պատուաբեր տիպար մը չէ»⁶: Մինչույն վերաբերում է նաև Համզայի կերպարին, որն էպոսի բոլոր տարբերակներում բացասական հերոս է:

Հատկանշական է, որ Թուրքիայի հանրապետական շրջանում գրաված բանահյուսական ստեղծագործություններում հայազգի հերոսներն, ընդհանրապես, ներկայանում են որպես բացասական կերպարներ, ավելին՝ որպես օսմանյան սուլթանի և ցեղապետների միջև խռովությունների հրահրողներ: Վերոհիշյալ մոտեցումը բավական կենսունակ է եղել նախորդ տասնամյակներում, և մինչ այժմ թուրք բանագետների ուսումնասիրություններում նման կարծրատիպը գերիշխող է:

Քաչալ Համզայի կերպարն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում՝ արժանի լինելով առավել խորը և համակողմանի քննության, մասավանդ, հաշվի առնելով թյուրքական պատումներում նրան՝ որպես հայկական կերպար ներկայացնելը և Հ. Պերպերյանի դիտարկումը բացասական հերոսներին հայկական ծագում վերագրելու վերաբերյալ⁷:

Համզայի կերպարը «Քյոռոզլի» էպոսում

Համզայի կերպարն առավել ընդգծված է «Քյոռոզլի» էպոսի արևմտյան խմբի բոլոր տարբերակներում, ներառյալ 1830-ական թթ. Իրանի Ատրպատական երկրամասում Ալեքսանդր Խոճկոյի գրած և 1842 թ. Լոնդոնում հրատարակված ատրպատականյան տարբերակը, որը համարվում է առաջին և ամբողջ-

³ Boratav 2016, 45, 54, 71 նն:

⁴ Boratav 2016, 126.

⁵ Պերպերյան 1938, 42:

⁶ Պերպերյան 1938, 42:

⁷ Պերպերյան 1938, 42:

ջական գրառումը⁸: Ընդամին, բոլոր տարբերակներով Համգան ներկայանում է որպես Քյոոզոլու նծույգի առևանգիչ և հակառակորդի լրտես:

Թուրքական և ադրբեջանական տարբերակներում Չամլիբեկ արշավելուց առաջ Քաչալ Համգային (Քիչել Հենգե, Համգա-բեկ) հանձնարարվում է առևանգել Քյոոզոլու Ղըռաթ նծույգը՝ փորձելով թուլացնել գլխավոր հերոսի ուժը: Փոխարենը պատվիրատու մեծատոհմիկը (Ստամբուլի սուլթանը, Թոխատի Մահմուդ փաշան, Էրզրումի կառավարիչ Ջաֆար փաշան ևն) խոստանում է կնության տալ դստերը: Բոլոր դեպքերում խորամանկ Համգային հաջողվում է ծառայության անցնել Չամլիբեկում, որպես ձիապան (որոշ պատումներում՝ նախկինում էլ լինելով ձիապան Քյոոզոլու խմբում), շահել Քյոոզոլու վստահությունը և առևանգել Ղըռաթին: Քյոոզոլու կողմից հետապնդման, ջրաղացում ծպտյալ Համգայի հետ հանդիպման, Ղըռաթ և Դորաթ նծույգների փոփոխման դրվագները պահպանված են արևմտյան խմբում: Ընդհանուր է նաև բնորոշ շարունակությունը ծպտյալ Քյոոզոլու՝ մեծատոհմիկի ոստան մեկնելու, Ղըռաթին վերատիրանալու և Չամլիբեկ վերադառնալու մասին, հիմնականում մեծատոհմիկի դստեր հետ: Բնորոշ է նաև փախուստից առաջ Ղըռաթին լավ հետևելու և իր նպատակին հասնելուց հետո վերադարձնելու Համգայի խոստումը՝ ի պատասխան խաբված Քյոոզոլու խնդրանքների: Որոշ պատումներում Համգան իրապես օժանդակում է Ղըռաթի վերադարձի հարցում և ինքն է կնության առնում մեծատոհմիկի դստերը:

Հարկ է նշել, որ թուրքական պատումներում Քյոոզոլու նծույգի առևանգիչի դերում Համգան երբեմն փոխարինվում է այլ կերպարներով, ինչպիսիք են Քելօղլանը (Քել Օղլան, Քյալօղլան) և Մուրթուգան, իսկ Մարաշի պատումներում՝ Յեքչեշիմը (Յեք Չեշիմ)⁹: Որոշ դեպքերում էլ, «քաչալից» բացի, «Քելօղլանը» Համգայի մեկ այլ նույնիմաստ մականունն է¹⁰: Մինևույնը դիտարկվում է նաև ադրբեջանական որոշ պատումներում, ընդ որում, Քյոոզոլին ինքն է նրան կնքում «Քյալաօղլան» մականվամբ¹¹:

Մինևույնը դիտարկվում է նաև թուրքերենից արված հայ աշուղական փոխադրություններում, մասնավորապես, աշուղ Ջամալու (Մկրտիչ Տալյան) տարբերակում. «*Համգա անոնուլ, գլուխը կնքակ, դրա համար էլ կնքակ տղայ (քալ օղլան) էին ասում*»¹²: Այն կրկնվում է նաև աշուղ Խայաթի (Սուքիաս

⁸ Chodzko 1842. Էպոսի արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դադստանյան, քրդական ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան տարբերակին: Արևելյան խմբում ընդգրկված են թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպական, Բուխարայի արաբների, տոբոլ-թաթարական, ույղուրական տարբերակները:

⁹ Boratav 2016, 71, 115.

¹⁰ Ընդհանրապես, Քելօղլանը տարածված կերպար է թուրքական հեքիաթներում, բազմաթիվ գրույցներ գրառվել են Թուրքիայի ասիական մասում (թրք.՝ Անադոլու): Առկա տեսակետների համաձայն՝ այն բնորոշ է համարվում, ընդհանրապես, թուրքբանահյուսությանը՝ համարժեք այթայան ավանդազրույցների Թասթարաքային [Ergun 2005, 78–84]:

¹¹ Коротлы 2000, 205.

¹² Քոռոլուի հեքիաթը 1904, 59:

Ջահրիյան) տարբերակում. «Համզա անունով, որին մականուն էին տալիս Քեալ-օղլան»¹³: Ջամալու մյուս փոխադրության մեջ Ղըռաթ (Պիսակ) նժույգն առևանգում է Քյոռօղլու ծառայողներից Մուրթուզան՝ հանձնելով Գզիրօղլի Մուստաֆային¹⁴: Իսկ մյուս տարբերակում «կնդակ Համզան» («քաչօղլան») որպես ձիապան ծառայության է անցնում Քյոռօղլու մոտ, հենց Մուրթուզային օգնելու նպատակով¹⁵:

Ուրմիայի բարբառով հրատարակված հայկական տարբերակում պատվիրատուն Քյոռօղլու երդվյալ հակառակորդ Էրզրումի Ալի-փաշան է, որը հետապնդում է երկակի նպատակ.

*-Ա՛խ, Ասլաժ ջան, բա՛ ինչ անեմ,
Ես Քյոռ-Օղլու ծին ծեռ պերեմ.
Վուէր ծեռ պերեմ, համ խրեղեն
Ծի կունենամ լրխիյիս մեչ,
Համ էլ, առանցի Ղռաթի,
Քյոռ-Օղլին ուր խոր հայիփը
Ընձըմե խանել չի կարող»¹⁶:*

Ղըռաթին տիրանալու համար Ալի-փաշան խոստանում է հանձնառուին կնության տալ դստերը՝ Դոնա-խանումին, ինչին արձագանքում է մարդկային գրեթե բոլոր թերություններն ունեցող Համզան (Համզո).

*Արզրումա բյուշաները
Բոշ-բեքար վելլամիշ ըլնող
Մե լութը-թուլի գյադա կար.
Լոռկյեր, թամբալ, քեշ, բոշբողազ:
Կեղծավուեր, լոթբազ, սոթասան.
Ասունը Համզա էր. ամնա
Չունքի կըլոխն էլ քյաչալ էր,
Տար խմար էլ փեղեն ըլնող
Կանչեսեն էր՝ «Քյաչալ Համզա»¹⁷:*

Հայկական տարբերակում ևս հետագա դեպքերը զարգանում են վերը նկարագրվածին համաձայն, կրկին ընդգծվում է Ղըռաթի եզակի նշանակությունը.

*Ղռաթը վիր փակը յըլալ,
Էն հենց զինքը Քյոռ-Օղլի յի»¹⁸:*

Ալի-փաշան որոշ պատիվների է արժանացնում Ղըռաթի առևանգիչին, «Քաչալների քյաչալ-Համզան» դառնում է «Համզա-բեզ» և «Ղահրաման» (թրք. «հերոս»)՝¹⁹: Սակայն նժույգի հետևից է գալիս որպես աշուղ ծալված Քյոռօղլին,

¹³ Հասան Փաշայի հեքեթըր 1910, 4–17:

¹⁴ Քոռօղլու հեքիաթը 1897, 24–34:

¹⁵ Քոռօղլու հեքիաթը 1904, 62–65:

¹⁶ Քյոռ-Օղլի 1941, 88:

¹⁷ Քյոռ-Օղլի 1941, 89–90:

¹⁸ Քյոռ-Օղլի 1941, 101:

¹⁹ Քյոռ-Օղլի 1941, 108–109:

կռվում փաշայի զորքի դեմ և հաղթում, դստեր խնդրանքով խնայում փաշային, ի վերջո, իր հետ տանում Դոնա-խանումին՝ զինակից Իսա-Բալիի հետ ամուսնացնելու համար, իսկ Համզային հանձնում է Ղըռաթի դատաստանին²⁰:

Արևմտյան խմբից Համզայի կերպարը չի հանդիպում, թերևս, միայն քրդական տարբերակում՝ դատելով Հայաստանի տարածքում ԽՍՀՄ օրոք գրառված պատումներից (թեև սպասելի է, որ, մասնավորապես, Թուրքիայում տարածված քրդական պատումներում նման կերպար արձանագրված է): Հաջիե Ջնդիի գրառած պատումներում Համզայի փոխարեն Բոլի բեկն է հմայվում «Ստամբուլի թագավորի» դստեր գեղեցկությամբ, որին տիրանալու համար պահանջվում է բռնել և բերել Քյոոռլուն Ղըռաթի հետ: Տեղեկանալով դրանից՝ Քյոոռլին աջակցում է Բոլի բեկին, սակայն վերջինս դրժում է պայմանավորվածությունը, և Քյոոռլին հայտնվում է գերության մեջ: Օգնության են հասնում «դալիները», ազատում Քյոոռլուն, իսկ Դոնա խանումին Իսա Բալիի համար հարսնացու տանում Չամլիբեկ²¹: Մեկ այլ պատումի մեջ, որպես նծույզի առևանգիչ, Համզայի փոխարեն հանդես է գալիս Քորոլանը, ընդամին, կրկնվում են նծույզների փոփոխման, ջրաղացում հանդիպման և այլ դրվագները²²:

Հետաքրքրական է, որ Հակոբ Շահբազյանի գրառած «Քրդական դիցազներգություն» մեջ առկա է 19-րդ դ. Կարնո, Վանի և Բաղեշի սահմաններում գործած ազնվաբարո ավագակ (եշկեա)²³ Համզոյի կերպարը, որը հանդես է գալիս որպես ձիու առևանգիչ և սպառազինված է կայծակե սրով:

*Ես Համզոն եմ, Համզոն եմ,
Թէջիրէն իլոսած ձիու վրայի հեծեալն եմ...
Իմ ձեռքին բռնած ունիւմ կայծակէ սուր...²⁴:*

Արևելյան խմբից Համզայի բացասական կերպարն առկա է բացառապես որոշ պատմավավերական ատաղձ ունեցող թուրքմենական, մասնավորապես, Չարջոույի շրջանում գրառված մի տարբերակի «Հեմզե-բեգ» գլխում, ընդամին, իրադարձությունները զարգանում են արևմտյան խմբին համահունչ սցենարով²⁵: Այլ դեպքերում Համզան հանդես է գալիս որպես զնդանի վերակացու, բանտապետ: Մնացյալ թուրքմենական, ուզբեկական և այլ պատումներում հերոսի մարտաձիու առևանգիչը խորամանկ պառավ Քեմփիրն է (Զուլման - քեմփիր են), որին հաջողվում է խաբեությամբ մուտք գործել Գյոոռլու կացարան, առևանգել և Նիշապուրի (Իրանի) շահին հասցնել Ղըռաթին: Վերջինիս վերատիրանալուց հետո հերոսը հաշվեհարդար է տեսնում նենգ կնոջ հետ²⁶:

²⁰ Քյոո-Օլլի 1941, 132-133:

²¹ «Քյոոռլի» էպոսի քրդական պատումները 1953, 65-93:

²² «Քյոոռլի» էպոսի քրդական պատումները 1953, 94-96:

²³ Արդի թրք. Eşkiya - «ավագակ», «կողոպտիչ»:

²⁴ Շահպազեան 1911, 154-156: Կայծակե թուրն առկա է նաև «Քյոոռլու» քրդական պատումներում [«Քյոոռլի» էպոսի քրդական պատումները 1953, 15, 43-49]:

²⁵ Каррыев 1968, 54.

²⁶ Каррыев 1968, 18, 174-175:

Որոշ դեպքերում Ղըռաթի կամ գլխավոր հերոսի մեկ այլ նժույգի առևանգման դրվագն առանց Համգայի կերպարի, այնուամենայնիվ, պահպանվել է ուղբեկական այլ վիպական գրույցներում²⁷: Իսկ տոբոլ-թաթարական տարբերակում Համգայի կերպարը պահպանվել է հանձին Քեզելի (իմա՝ Քեչելի), որն իրականացնում է միևնույն գործողությունները²⁸:

Էպոսի խոշորագույն հետազոտողներից Բայնուհամեդ Կարրիևի կարծիքով, Ատրպատականում 16–17-րդ դդ. տեղի ունեցած որոշ պատմական իրադարձություններ արտացոլվել են «Քյոռոլլի» էպոսում, ըստ այդմ, նշվել են որոշ կերպարների պատմական նախատիպերի օրինակներ: Համգայի դեպքում նկատի է առնվել պարսից Մոհամմադ Խոդաբանդա շահի (1578–1587 թթ.) բարձրաստիճան պաշտոնյա Ամիր Համգա-միրզան, որի խորհրդով 1584 թ. շահը փորձել է պաշտոնից հեռացնել և ձերբակալել Ատրպատականի կառավարիչ (բեկլերբեկ) թուրքմեն Ամիր-խանին, ինչը հարուցել է թուրքմենական թուրքեման և թեքելյու ցեղերի հետագայում դժվարությամբ ճնշված խռովությունը²⁹: Սակայն սա կարող է վերաբերել թուրքմենական «Գյոռոլլի» էպոսի միայն այն բացառիկ պատումներին, որոնցում Համգան ներկայանում է որպես զնդանի վերակացու, այլ ոչ թե նժույգի առևանգիչ:

Ամեն դեպքում ակնհայտ է Համգայի առանցքային դերակատարությունն էպոսի հիմնական պատումներում, այն է.

- Քյոռոլլու նժույգի առևանգիչ և հակառակորդին հանձնող, որով գլխավոր հերոսին հասցվում է զգալի հարված,
- Հակառակորդի լրտես-գործակալ Քյոռոլլու խմբում:

Ի տարբերություն բուն անվան՝ «Քաչալ Համգա» անվանաձևն առավելապես թվում է ուշ շրջանի հավելում՝ կապված տվյալ կերպարի խորամանկության ու ճարպկությանը, ինչպես նաև երկդիմության և կեղծավորության ընդգծմանը³⁰:

Աղերսներ հայոց բանահյուսության հետ

Համգայի կերպարը տարածված է եղել հայկական ժողովրդական հեքիաթներում և գրույցներում, մասնավորապես, որպես «Համգա փահլևվան»: Հայտնի է Մշո ասացողից գրառված «Հեքիաթ Ահմատ Խոջի, Հատյե Տուտի և Լոռվա Համգա փեհլիվանի» հեքիաթը, որում առկա է Լոռա կամ Լոռվա Համգա (Լոռա-Համգա) փեհլիվանի կերպարը, զուգահեռ նշվում է հերոսի հիմնական մականունն Քյաշլուկը կամ Քյաշալը³¹:

²⁷ Жирмунский, Зарифов 1947, 362.

²⁸ Boratav 2016, 71, 115:

²⁹ Каррыев 1968, 17–18.

³⁰ Համգա անձնանունն ունի արաբական ծագում, hamuza՝ «ուժեղ, տոկուն»: Ըստ Հ. Աճառյանի, բուն նշանակությունը՝ «վավաշտություն, ախորժակ» [Աճառյան 1946, 27]:

³¹ ՀԺՀ-13, 436–451:

«Համգա փահլիվան» անվամբ հեքիաթ Վաղարշապատի Կուլաբ գյուղում ժամանակին գրառել է բանահավաք Սարգիս Հայկունին, ընդ որում, նման կարգի հեքիաթները տարածված են եղել Վաղարշապատում և շրջակա գյուղերում (հիմնական պյուժեն՝ կնոջ հավատարմության մասին)³²: Մինևույն կարգի և անվամբ մեկ այլ հեքիաթ («Համգո փահլևան – իրիկ ու կնիկ»)՝³³ գրառվել է 1915թ., Մշո Խարձ գյուղից սերող ասացողից³⁴:

Ավելի վաղ Ս. Հայկունին Մոկսի Նորդուգա Տիմ գյուղի բարբառով գրառել է «Դալու Համգա» հեքիաթը, որում գլխավոր հերոսը թագավորի որդի է, ապա՝ արքաեղբայր, երկարատև դեգերումներից հետո կարողանում է գտնել եղբորը, տիրանալ թագուհու³⁵: Ուշագրավ է, որ գլխավոր հերոսը կրում է Քյոռոզլու զինակիցներին տրվող «դալի» («դելի») մականունը, ինչը նույնանում է Սասնա հերոսների «ծոռությանը»³⁶:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1911 թ. Մոկսում գրառված «Իշի արքավորին» հեքիաթը, որի գլխավոր հերոս Չաչալիկը դիմում է Սերոփ թագավորին. «Թագավոր, ինչ քսա ձի, քո ախչկան սուրաթ պիրիմ... Դու քո ախչիկ քոս, քանիս իսա ձի, ուր պիրիմ»³⁷: Թագավորի դստեր և ձիու հետ կապված այս դրվագը, թերևս, անմիջականորեն առնչվում է «Քյոռոզլի» էպոսի Քաչալ Համգայի հիմնական դերակատարությանը, այն է՝ գլխավոր հերոսի ձիու առևանգումը և փոխանցումը բարձրաստիճան իշխանավորին (սուլթան, փաշա են), վերջինիս դստերը տիրանալու պայմանով: Մինևույն քառյակը (Չաչալիկ, թագավոր, թագավորի ախչիկ, ձի) որոշակիորեն ներկա է կրկին Մոկսում 1911 թ. բանահավաք Երվանդ Լալայանի գրառած «Կյում գըլխիկ» հեքիաթում³⁸: Չաչիկը կնության է առնում թագավորի դստերը և տիրանում կենթագավորությանը 1915 թ. վանեցի ասացողից գրառված «Կոր պառավ» հեքիաթում³⁹: Ընդ որում, հատկանշական է կնոջ միջոցով դիմումը թագավորին («Կնա մեյ իսա ծի ուզի»), ինչը բավարարվում է⁴⁰:

³² ՀԺՀ-3, 567:

³³ ՀԺՀ-12, 13–22:

³⁴ ՀԺՀ-12, 619:

³⁵ Հայկունի 1904, 96–111:

³⁶ Հայկունին իրավամբ տվել է հետևյալ բացատրությունը. «Դալու կը նշանակէ ճիշդ մեր Դալիթ և Մհերի մէջ գործածուած ծոռ բառն, որի թէև իսկական նշանակութիւնն է յիմար, սակայն այսօրեղ կը նշանակէ քաջ, կորիճ, համարձակ, աներկիւղ կըն» [Հայկունի 1904], 98): Սասնա ծոռի և «Քյոռոզլու» ծոռի (դալիների) ընդհանրությունը նկատվել է նաև Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից, որոնց ձևակերպմամբ, ծոռը թշնամիներից չի վախենում, իբրև անվեհեր կտրիճ՝ կռվում է նրանց դեմ, և, ընդհանրապես, թշնամիներն իրենք են սարսափում նրանից, ընդ որում, հերոսներին տրվող այդ մակդիրը հին է և ընդհանուր: Որպես օրինակ են բերվում Քյոռոզլու «դալի»-ծոռերը [Սասնա ծոռ 1951, 846]:

³⁷ ՀԺՀ-12, 570:

³⁸ ՀԺՀ-12, 351–369:

³⁹ ՀԺՀ-14, 314–320:

⁴⁰ ՀԺՀ-14, 318:

Առավել ուշագրավ է բասենցի ասացողից գրառված «Քյալ օղլան» հեքիաթը⁴¹, որի գլխավոր հերոսը, փաստորեն, կրում է «Քյոռօղլի» էպոսի որոշ պատումներում Քաչալ Համգային տրվող մեկ այլ մականունը: Դրանով պայմանավորված՝ թագավորին փեսայացած Քյալօղլանին միաժամանակ դիմում են որպես «Քյաչլակ փեսա»⁴²: Քյալօղլանն ինքը լինելով թագավորագն և որպես ճաղատ ծառվելով՝ հերոսական արարքներ է կատարում, ընդ որում, «Քյոռօղլի» էպոսում գլխավոր հերոսի մարտաձիերին համանուն Դըռ և Տոռ նծույգներով⁴³ (Քյոռօղլու դեպքում՝ Դըռաթ և Դորաթ), վերջում դժվարությամբ հայթայթած առյուծակաթով («ասլընի կաթ») բուժում հիվանդ թագավորին և ժառանգում նրա թագավորությունն արքայադստեր հետ: Այն, ինչ չի հաջողվում Քելօղլան-Քաչալ Համգային «Քյոռօղլի» էպոսի հիմնական տարբերակներում:

Ընդհանրապես, հնարագետ, խորամանկ և բանասարկու ճաղատ-քաչալի կերպարը տարածված է Արևելքի ժողովուրդների բանահյուսության մեջ, ինչը դիտարկվում է նաև հայոց բանահյուսության պարագայում (քյաչլիկ, քաչալիկ, քեչլիկ, քյաջլուկ, չաչալ, չաչալիկ ևն): Ընդամին, ընդգծվում է «*քաչալի անսպառ հնարանրությունը անելանելի վիճակներից դուրս գալու և պայքարը նպատակին հասցնելու համար*»⁴⁴, մեկ այլ դեպքում՝ «*քաչալը*» սովորում է *գիր անելու արվեստը, բեկանում հարուստի աղջկա հարսանիքը և ամուսնանում նրա հետ*»⁴⁵, մինևույն նպատակով «հնարագետ քաչալն» իրեն է ծառայեցնում չար ուժերին և տիրապետում մոգական հնարքների⁴⁶: Ավելին, քաչալը կարողանում է հաղթել հարուստներին⁴⁷, կողոպտել անգամ թագավորին, իսկ վերջում՝ ամուսնանալ նրա դստեր հետ, բացահայտել քողարկված գաղտնիքը⁴⁸, այն, ինչն անհնար է սովորական մահկանացուի համար: Հայկական հեքիաթների սկզբում քաչալին սովորաբար բնորոշ են աղքատությունը, անխելքությունը, վախկոտությունը, ծուլությունը և շատակերությունը, ընդամին, առժամանակ արժանանալով շրջապատի ծաղրին ու քամահրանքին՝ քաչալը հետագայում հեռանում է տնից, ցուցաբերում ճկունություն և խելք, հարստացած վերադառնում տուն⁴⁹:

Կարապետ Մելիք-Օհանջանյանի բնորոշմամբ, «*մեր բանահյուսության մեջ քոստյուն (=պիսակ) ու կոլոյրը, թոփալն ու քաչալը բացասական հատկությու-*

⁴¹ ՀԺՀ-4, 302–309: Ասացողը՝ Բասենի Հարսնեքար գյուղից, գրառել է բանահավաք Արտաշես Բարսեղյանը (գրառման ժամանակն՝ անհայտ): «Քյալ օղլանի» բազմաթիվ տարբերակ կան նաև այլ ժողովրդական հեքիաթներում [ՀԺՀ-4, 500]:

⁴² ՀԺՀ-4, 306, 309:

⁴³ ՀԺՀ-4, 306–309: «Քյոռօղլի» էպոսին բնորոշ թրքահունչ անուններով զույգ մարտաձիերը՝ Դըռ և Տոռ, հանդիպում են այլ ժողովրդական հեքիաթներում ևս:

⁴⁴ Գևորգյան 1999, 10:

⁴⁵ Խաչատրյան 1999, 14: Տե՛ս նաև «Քաչալոք» և «Քըչլուգ» հեքիաթները [Խաչատրյան 1999, 71–77]:

⁴⁶ ՀԺՀ-1, 515–519 («Հնարագետ քաչալը»):

⁴⁷ ՀԺՀ-6, 529–536 («Քաչալն ու խազեյինը»):

⁴⁸ Խենյան 2008, 167–170 («Քաչալն ու իրա դային», «Պըրկըփոխան կնիկը»):

⁴⁹ Վարդանյան 2009, 47:

յունների՝ խորամանկության, նենգության, դավաճանության, չարության և այլն մարմնացումներն են: Ժողովուրդը ասում է՝ «Քաչալեն, քոսալեն, մեկ էլ գոյ-գոգ մարթեն - խաթա կիկա»⁵⁰: Որոշ նյութերում տվյալ կարգի կերպարները նույնիսկ միասին են հանդես գալիս («Քաչալը, քառը, փկոթը նաև քոռը»⁵¹, «Քյոսի, Թոփալի ու Քոռի նաղլը»⁵², «Հեքիաթի դյոզամեն»⁵³, «Քոռը, թոփալը, չաչալը»⁵⁴ ևն), իսկ երբեմն՝ համատեղ գործում և շահում («Քոսակեն հու քաչալեն հաքյաթը», «Քաչալն ու Քոսակը»)⁵⁵: Համարվում է, որ քոսակը քաչալի մեկ այլ տարբերակն է (մագազուրկ հերոս), կրկին սրամիտ և աճապարհ⁵⁶: Սակայն այլ դեպքերում «քաչալը» կերպավորվում է դրական գծերով, օրինակ, միևնույն դեպքում հանդես է գալիս նաև թագավորի կրտսեր որդին, որը կարողանում է դևերից տիրանալ Ղըռ և Սև ձիերին, վերադառնալ և ճանաչվելով՝ ընդունվել հոր կողմից⁵⁷: Նույն կերպ է գործում նաև թագավորին փեսայացող և վերջում թագավոր դարձող Քաչիկը (Քեչիկ), որը տիրանում է միանգամից երեք հրաշք-ձիերի⁵⁸:

Ընդհանրապես, հայկական հեքիաթների «քաչալին» ևս բնորոշ է բարձրաստիճան մեծատոհմիկին, սովորաբար՝ թագավորին մերձավոր ազգակցության հանգամանքը, այն է.

- Թագավորի որդի, որն ինչ-ինչ հանգամանքների հարկադրանքով կերպարանափոխվում է և հանդես գալիս որպես անճանաչելի քաչալ-ճաղատ՝ չճանաչվելով անգամ հորից կամ մերձավոր ազգականներից, այնուհետև որոշ հերոսական արարքներից հետո բացահայտում իր ինքնությունն ու վերատիրանում արքայական պատիվների:
- Թագավորի փեսա, որն սկզբում արժանանում է թագավորի և շրջապատի քամահրանքին, այնուհետև ապագա կնոջ աջակցությամբ կատարում է հերոսական արարք կամ թագավորի անհնարին թվացող հանձնարարությունը (առավել հաջողակ, քան մյուս փեսաները կամ թագավորի որդիները), երբեմն զրպարտվելով՝ բացահայտում ճշմարտությունը և կրկին արժանանում պատիվների ու փեսայանում թագավորին:

⁵⁰ Մելիք-Օհանջանյան 1947, 68: Հայտնի է նաև Րաֆֆու դիպուկ բնորոշումը. «Երբ որ քաչալ կա, անպարճառ քոսակն էլ պետք է լինի... Թե քաչալները և թե քոսակները ժողովրդի հասկացողությամբ խորամանկ, հնարագետ, նենգավոր և ճարպիկ են լինում» [Րաֆֆի 1964, 443]:

⁵¹ Ղազիյան 1983, 138:

⁵² ՀԺՀ-1, 507-511:

⁵³ ՀԺՀ-18, 219-220:

⁵⁴ Հեքիաթը 3 եղբայրների մասին է՝ «մեկս քոռ, մեկս թոփալ, մեկս չփաղ» [ՀԺՀ-5, 463-464]:

⁵⁵ ՀԺՀ-6, 260-261, 599-600:

⁵⁶ Վարդանյան 2009, 49:

⁵⁷ ՀԺՀ-4, 244-256 («Քաչիկի հեքիաթ»): Տե՛ս նաև ՀԺՀ-18, 133-146 («Թզուկի հեքիաթ»):

⁵⁸ ՀԺՀ-10, 107-116:

Հայկական լեռնաշխարհում քաչայի մասին գրույցների տարածվածության շառավիղը բավական մեծ է. դրանք արձանագրված են Արցախի և հարակից տարածքներում («Քաչալին հաքյաթը»⁵⁹, «Քաչալ ախպերը»⁶⁰ ևն), անգամ հեռավոր Քեսապի շրջանում արձանագրվել են «Քալ Տըղայի» (Ճաղատ Տղա) մասին հայտնի մոտիվներով միևնույն գրույցները («Քալ Տըղան իլան հէնկ ածտա-հաքը», «Քալ Տըղան իլան տէյըրմէնճէն հակ'իուօթը», «Քալ Տըղէն սէօտը»)⁶¹: Միևնույն մոտիվները դրսևորվում են նաև Արևմտյան Հայաստանի տարածքում Քելօղլանի կամ Քյալօղլանի մասին թուրք բանահավաքների գրառած հեքիաթներում⁶²:

Հաշվի առնելով դեռևս Ժորժ Դյումենզիլի⁶³, ֆրանսահայ բանասերներ Հայկ Պերպերյանի և Ստեփան Ահյանի⁶⁴ առաջադրած տեսությունը «կույրի որդու» առասպելության տարածվածության, դրա շրջանակներում «Պարսից պատերազմ» հերոսավեպի (Արշակ Բ-ի վեպ, Տիրան-Տրդատի վեպ) և «Բյոռօղլու» էպոսի միջև առանցքային տարրերի և առասպելության բնորոշ հիմնականախքի առկայությունը՝ հավանական է թվում Քաչալ Համգայի կերպարի համեմատությունը վերը նշված գործառության դերակատարությամբ հայկական տարբերակում հանդես եկող կերպարների հետ, այն է՝ Փիսակ Սյունի և Բզնունյաց նահապետ Դատաբեն (հիշատակված մյուս անվանաձևերը՝ Դատաբե, Դատաբա և Դատաքե): Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդումներով, հերոսավեպի զարգացման հիմնական գծերը հետևյալն են.

- Բուզանդի հաղորդմամբ, հայոց Տիրան արքայի սենեկապետ Փիսակ Սյունիի նյութած դավերի հետևանքով Ատրպատականի մարզպան Վարազ Շապուհը տեղեկանում է Տիրանի Ճարտուկ Ճանճկեն նժույգի մասին, պահանջում այն, սակայն կրկին Փիսակից տեղեկանալով, որ իրեն փոխանցվել է դրա նմանակը՝ մի առիթով ընթերիքի է հրավիրում հայոց արքային, կուրացնում և հանձնում պարսից արքային:
- Հաջորդում է պատերազմը Մեծ Հայքի և Արևելահռոմեական կայսրության (Բյուզանդիա) դաշնակից բանակների և Սասանյան Իրանի ուժերի միջև, պարտությունից հետո պարսից արքան քննում է եղելությունը և պատժում Վարազ Շապուհին:
- Հաջորդաբար Տիրանն ազատվում է բանտից և վերադառնում հայրենիք, նրան է փոխարինում Արշակ Բ-ն, որն իր հերթին 30 տարի անընդհատ պատերազմում է պարսից դեմ⁶⁵:

⁵⁹ ՀԺՀ-6, 165–167, 266–267; ՀԺՀ-7, 107–108:

⁶⁰ ՀԺՀ-7, 107–108:

⁶¹ Չոլաքեան 1998, 434–445 («Ճաղատ Տղան և հինգ հսկաները», «Ճաղատիկին և ջաղացականին հեքիաթը», «Ճաղատ Տղուն սուտը»):

⁶² Ergun 2005, 78–84.

⁶³ Dumézil 1938, 64–74.

⁶⁴ Ահյան 1997, 148–153:

⁶⁵ Փավստոս Բուզանդ 1987, 78–92:

- Մովսես Խորենացուն Փիսակի անունն անձանոթ է մնացել, իսկ Դատաբեն կամ Դատաքեն իշխանի առնչությամբ երկու պատմիչն էլ հաստատում են նրա մասնակցությունը հայոց գահի դեմ ուղղված դավերին, Բուզանդի դեպքում՝ դավաճանն սպանվում է քարկոծման միջոցով⁶⁶:

Կ. Մելիք-Օհանջանյանի դիտարկմամբ՝ Փիսակը հատուկ անձնանուն չէ, այլ մի բացասական մականուն, որն ստեղծել են ժողովրդական ասացողները «դավաճանի հայրենադավ ֆունկցիոնալ դերի համեմատ»⁶⁷, իսկ Բզնունյաց նահապետի մասով եզրակացվում է, որ վերջինիս ճիշտ անվանաձևը «Դատաբենն» է, ինչպես Բուզանդի մոտ: Համոզմունք է հայտնվում, որ «Խորենացու ասելով՝ Տիրանի և Դատաբենի հետ կապված է ձիերի մասին ասվող ինչ-որ գրույց: Այդ գրույցի ծայրը, ըստ իս, գրնում ենք Բուզանդի Փիսակի տիրադավ պարմության մեջ... Խորենացու Բզնունյաց Դատաբեն իշխանի, թե Բուզանդի Դատաբեն իշխանի և թե նույն Բուզանդի Սյունյաց Փիսակ իշխանի մասին ավանդվող գրույցը միևնույն վիպական իրադարձության արտացոլքն է, միևնույն եղելության վիպական double emploi-ները, ընդ որում մի դեպքում դրանք հորինված են Տիրանի սիրած ձիերի կապակցությամբ»⁶⁸: Ի վերջո, եզրակացվում է, որ «վիպական այս էպիզոդի գլխավոր դերակատար Փիսակը հայտնի անուն չէ, այլ մի մականուն՝ «բորոտ», «քոտոտ» նշանակությամբ, որ հավանորեն տրված է եղել Բզնունյաց դավադիր, դավաճան, խառնակիչ իշխան Դատաբենին»⁶⁹:

Ի հաստատումն վերոհիշյալի՝ հարկ է նշել, որ, իրոք, հին պարսկերեն «փիսակն» ունի «բորոտի» իմաստը⁷⁰, ինչն անցել է հայերենին նաև «պիսակ» ձևով, փոխառվել և հայտնի է եղել հին հունարեն *πισαγας* կամ *πίσαγας* տարբերակով, Հերոդոտոսի և այլ պատմիչների (Կտեսիաս Կնիդացի, Իսիդորոս) երկերից⁷¹:

Մ. Աբեղյանն առանձնահատուկ մատնանշում է Փիսակին տրված մականունները՝ «մոլեկան, անօրէն, կատաղախօս, շնաբերան, շորիկ, շոգմոգ, տիրանենգ, տիրադրոժ, տիրասպանու, տիրամարտիչ»⁷²: Բուն «Փիսակ» անունը, թերևս, տվյալ շարքի բարձրակետն է:

Այսպիսով, Քաչալ Համգայի և նրա բացահայտ վիպական նախորդ Փիսակ-Դատաբենի կերպարների համեմատությամբ ևս մեկ կովան է ի հայտ գալիս «Քյոռօղլի» էպոսում Ժ. Դյումենգիլի առաջադրած «կույրի որդու» առասպելային հիմնականիքի հաստատման համար:

⁶⁶ Փաւստոս Բիւզանդ 1987, 78–79; Մովսես Խորենացի 1981, 206:

⁶⁷ Մելիք-Օհանջանյան 1947, 67:

⁶⁸ Մելիք-Օհանջանյան 1947, 74:

⁶⁹ Մելիք-Օհանջանյան 1947, 77:

⁷⁰ Աճառյան 1962, 206:

⁷¹ Gazis 1836, 755.

⁷² Աբեղյան 1968, 270:

Մեջբերվող աղյուսակում ներկայացվում են տվյալ կերպարների մասով հայոց հերոսավեպում և թյուրքական էպոսում միմյանց համապատասխանող կետերը:

	Պարսից պատերազմ (Արշակ Բ-ի վեպ)	Քյոոզլի
Գլխավոր հերոս	Արշակ Բ (կուրացված Տիրան արքայի որդի)	Քյոոզլի-Ռուշան (կուրացված արքունի ձիապանի որդի)
Հակառակորդ	Պարսից շահ (մարգպան)	Պարսից շահ (այլ տարբերակներով՝ օսմանյան սուլթան, Էրզրումի փաշա ևն)
Հոր կուրացման պատճառը	Հրաշք-նժույգի (Ճարտուկ Ճանճկեն, օղագնաց) փոխարեն այլ երիվարի տրամադրում	Հրեղեն քուռակի փոխարեն, իբր, սովորական երիվարի ներկայացում
Հետևանքը	30-ամյա պատերազմ պարսից շահի դեմ մինչև Արշակ Բ-ի ձերբակալությունն ու սպանությունը	Հրոսակային գործունեություն, անհնազանդություն պարսից շահին (օսմանյան սուլթանին) մինչև Քյոոզլու ձերբակալությունն ու սպանությունը շահի զինվորների կողմից (հիմնական պատումներում)
Հակառակորդի գործակից	Արքունի սենեկապետ Փիսակ (Բզնունյաց իշխան Դատաբեն/ Դատաքեն)	Խմրի անդամ, ձիապան Քաչալ Համգա
Դավաճան գործողություն	Նժույգի մասին տեղեկության բացահայտում հակառակորդին, արքայի վարկաբեկում	Նժույգի առևանգում և փոխանցում հակառակորդին, ինչով գլխավոր հերոսին հասցվում է զգալի հարված
Պատիժը	Փիսակի մահը քարկոծման միջոցով	Համգայի մահը (որոշ պատումներում՝ սմբակահար է լինում նժույգի կողմից)

Միննույն նկատառումով կարելի է բացատրել զգալի թվով թյուրքական պատումներում Համգային հայկական ծագում վերագրելը, ավելին՝ ուղղակի «Հայ Համգա» կոչելը⁷³: Ընդամին, վերոհիշյալը դիտարկվել է էպոսի զանազան տարբերակների գրառման հենց սկզբից:

⁷³ Հ. Պերպերյանի կարծիքով՝ «Հայ մը կամ մահմեդականացած Հայ մը կրնայ Համգայի դերը կարարած ըլլալ» [Պերպերեան 1938, 42]:

Մասնավորապես, 1843 թ. Կովկաս ճանապարհորդության ընթացքում պրուսացի ուսումնասիրող Ավգուստ ֆոն Հաքստհաուզենի գրառած տարբերակում Քյոռոզլու նծույզի առևանգիչ Համզան հայ է, որը կարողանում է խորամանկել և ճարպկորեն տիրանալ Ղրոաթին (ջրաղացի բնորոշ դրվագի կրկնությամբ)՝ փոխարենն արժանանալով սուլթանի պարգևին⁷⁴։ Ընդ որում, աշխատության գերմաներեն բնագրում միանշանակ նշվում է Ղրոաթի առևանգիչ հայազգի Համզան՝ «ein Armenier, Hamza»⁷⁵, նույն կերպ նշվում է ռուսերեն թարգմանված տարբերակով՝ «Армянин Гамза»⁷⁶, անգլերեն հրատարակության մեջ հիշատակությունը վերացական է՝ «An Armenian»⁷⁷։ Ավելի ուշ՝ 1872 թ. հայերեն հրատարակության մեջ գեղջված է, ընդհանրապես, Քյոռոզլուն վերաբերող հատվածը, ըստ այդմ, Համզայի անունը և համապատասխան դրվագը բացակայում են։

Ճիշտ է, կարելի է մտածել, որ թուրք բանասացների կողմից տվյալ կերպարին փորձ է արվել հաղորդել, թուրքերի ընկալմամբ, հայերին բնորոշ խորամանկության ու ճարպկության գծեր, սակայն առավել համոզիչ է թվում հայկական հերոսավեպի միևնույն գործառույթներով ու հատկանիշներով օժտված Փիսակ-Դատաբենի կերպարի ներթափանցումը թյուրքական էպոս, ըստ երևույթին, թյուրքալեզու հայ աշուղների միջոցով։ Հատկանշական է, որ երկու դեպքում էլ անվանաձևերում առկա են բացասական-քամահրական մակդիրներ՝ «Քաչալ» և «Փիսակ»։

Համզայի կերպարը «Սասնա ծռեր» էպոսում

Հետաքրքրական է միևնույն Քաչալ Համզայի կերպարի առկայությունը հայ բանահյուսության մեջ, ինչն առավել դրսևորվել է, մասնավորապես, «Սասնա ծռեր» էպոսի ամենատարբեր պատումներում։ Կերպարը հանդես է գալիս միևնույն Քաչալ Համզե կամ Համզո, ինչպես նաև Լոռա կամ Լոռվա Համզա անուններով, հիմնականում Խանդութի ուզնկանների թվում, որը կոչվում և պարտվում է Սասունցի Դավթից։ Ուզնկան Համզայի կերպարն առավել ցայտուն է ներկայացվում 1932 թ. Սասնա Ճախրկան գյուղից սերող և էպոսի լավագույն բանասացներից մեկը համարվող Թամո Դավթյանից Մելիք-Օհանջանյանի գրառած պատումում, որում «*Ախլաթի սարերի Համզա դևը*» ցանկանում է տիրանալ Կաղզվանի Մելքոն թագավորի աղջիկ Խանդութ խանումին։ Ըստ այդմ, Համզան թուղթ (նամակ) է հղում Մելքոն թագավորին, որ Խանդութին ուղարկի իրեն։ Մելքոնն ահից համաձայնում է, պատվիրում Խանդութին՝ պատրաստվել Համզա դևին կնության։ Իսկ Բողե դռնապանը Դավթին խորհուրդ է տալիս թողնել Խանդութին, վերադառնալ Սասուն, չգնալ կովի Համզայի դեմ։ Սակայն Դավիթը Համզային հայտնում է իր և Խանդութի

⁷⁴ Haxthauzen 1856, 159.

⁷⁵ Haxthauzen 1856, 159.

⁷⁶ Гакстрэузен 1857, 151.

⁷⁷ Haxthauzen 1854, 178.

նշանվելու մասին և մի մատանի (կամ ապարանջան) ուզում, որ տանի նշան: Համզան տալիս է իր ճկույթի մատանին, որը Դավիթն անցկացնում է իր թևին, գնում⁷⁸: Ի վերջո, Դավիթը մենամարտում և կտրում է Համզա դևի գլուխը, այն ուղարկում Մելքոնին⁷⁹: Միննույն կերպ են զարգանում դեպքերն այլ պատումներում. Դավիթը մեկնում է Խանդութի ուզնկան «Համզա փահլևանի քաղաք», վերցնում նշան սիրեցյալի համար, մենամարտում սպանում և կտրում Համզայի գլուխը, որը հանձնում է Խանդութի հորը⁸⁰:

Քաչալ Համզոյի և նրա գործակից Շապկով Խորովածի կերպարն առկա է նաև համեմատաբար նոր ժամանակներում գրառված պատումներում, որոնցում Դավիթը կրկին պատերազմում է նրանց դեմ, Խանդութին տիրանալու համար⁸¹:

Այլ պատումներում առկա է Լոռա, Լուռա կամ Լոռվա Համզեի կերպարը, իսկ Քաչալ Համզեն և իր գործակից Շապկով Խորովածը փոխակերպվում են Լոռվա Համզա և Շաբու Խորասանցի հսկաների, Հրմզա Լոռա և Շրբրզան Խորասանկան փահլևանների, Լոռա Համզի և Շապգոնց Խորասանու, Լոռա Համզու և Շայմանցովի ևն, որոնց դեմ դարձյալ կռվում է Դավիթը: Մի պատումի մեջ երկու կերպարները միաձուլվել են (Լոռվա Շաբի-արքան թագավոր)⁸², կամ հանդես է գալիս առանձնակի մեկ այլ կերպար (Շաբու Երզանի տղա)⁸³: Այլ տարբերակով Լոռա Հրմզան և Շրբրզան (Շրբզան) Խորասանկանը նշվում են Մըսրա Մելիքի ավանդական դաշնակիցների շարքում՝ Օղան և Տոդան (Աղան-Տաղան) թագավորների, Աջմու Շապուիի և Պարոն Աստղիկի հետ միասին⁸⁴: Վերջում Դավթին հաջողվում է կարճատև մենամարտում հաղթել Լոռա Հրմզա և Շրբրզան Խորասանկան փահլևաններին, կտրել նրանց գլուխները և տանել Խանդութին, որպես «նշանաբան»⁸⁵:

«Սասնա ծռերի» որոշ պատումներում Համզան կամ Համզա փահլևանը լրջագույն հակառակորդ է՝ Դավթի սպանության դրվագում հանդես գալով պատումների մեծ մասին բնորոշ Չմշկիկ Սուլթանի կամ նրա դստեր դերակատարությամբ: Համզան Եզիպտոսի (իմա՝ Մըսրա) գորքի հետ կտրում է Դավթի ճանապարհը և կռվի հրավիրում, ինչից Դավիթը չի կարողանում խուսափել: Համզան թիկունքից դավադրաբար նետահարում և սպանում է գետում լողա-

⁷⁸ Սասնա ծռեր 1999, 441, տե՛ս Սասնա ծռեր 1944, 153–197, պատում Ե:

⁷⁹ Սասնա ծռեր 1999, 441: Որոշ պատումներում Խանդութի ուզնկան Համզա դևի կերպարը համեմատելի է Դեղձուն-Ծամի դոյակը հսկող Համտոլ դևի հետ, որին քշում է Սանասարը: Ըստ Հ. Աճառյանի՝ նաև հայոց մեջ վկայված «Համիդոլա» անձնանունն արաբական ծագման է, amud-ud-dovla պարսկերեն տիտղոսից, որ նշանակում է «սին պետության» [Աճառյան 1946, 28]:

⁸⁰ Սասնա ծռեր 1944, 84–88, Սասնա ծռեր 1951, 606–609:

⁸¹ Գրիգորյան 1985, 26: Գրառվել է 1973 թ., Գեղարքունիքում (Մարտունի), ալաշկերտցիների սերունդներից:

⁸² Սասնա ծռեր 1944, 98:

⁸³ Սասնա ծռեր 1944, 317:

⁸⁴ Սասունցի Դավիթ 1993, 241, 299, 305–306:

⁸⁵ Սասունցի Դավիթ 1993, 308–309:

ցող Դավթին, ինքնասպան է լինում Խանդութը⁸⁶: Համգա փահիլանի հետ հակամարտությունը շարունակում է Դավթի որդի Փոքր Մհերը, որին Համգան բռնում և հանձնում է Մըսրա թագավորին, ինչից հետո Եգիպտոսում Մհերին գցում են անջրդի հորը, որտեղից նա ազատվում է տեղացի մի հայ պառավի օգնությամբ, այնուհետև ջախջախում ու սպանում Համգային, այդ կերպ առնում ծնողների վրեժը⁸⁷:

Բանահավաք Ստեփան Կանայանն էպոսի՝ իր գրառած պատումներից մեկում որպես «Լոռուայ Հըմգայ փահիլան» կամ «Լոռու Համգե» կոչվող հերոսի պատմական նախատիպ սկզբում նշել է օտար համանուն իշխանի, սակայն այլ պատումներում նույն կերպարը դիտարկելով Պոռշ իշխանի հետ՝ հավանական է համարել նրա նույնացումը 10-րդ դ. գործած Պահլավունի իշխան Գրիգոր Համգեի, այն է՝ Ապուղամրի որդի Գրիգոր Համգեի (941–982 թթ.) հետ⁸⁸: Որպես հավելյալ կովան, նշվել է Պահլավունիների՝ Լոռիում ամրոցներ ու կալվածքներ ունենալը, մինևույն տարածաշրջանում Համգայի անվամբ տեղանունների առկայությունը⁸⁹, ինչը ոչ միայն վիճելի է, այլև տիպաբանական վերլուծությամբ որևէ աղերս չունի հայոց էպոսի հերոսի հակառակորդներից մեկի կերպարի հետ: Բացի այդ, «Սասնա ծռերի» տարբեր պատումներում նշվող Լոռա դաշտը⁹⁰ տեղադրվում է Սասնա սահմաններում, ընդ որում, այնտեղ են գտնվում Կաթնով աղբյուրը և Պողպատե պուրը, ինչպես նաև Սասնա դեմ պատերազմելու պատրաստվող Մըսրա Մելիքի բանակատեղին⁹¹:

Չի բացառվում, որ Կանայանի վերոհիշյալ ենթադրությունն էական դեր է խաղացել բանահավաք Տիգրան Չիթունու «Սասունական» մշակման մեջ Համգային ոչ միայն դրական դերակատարություն վերագրելու, այլև «Սասնա ծռերի» յոթերորդ ճյուղի գլխավոր հերոս ներկայացնելու հարցում⁹²: Համգա-Փահիլանը կամ Համգա-Պահլավանը նշվում է այլ անուններով ևս (Համգա-Փալավան, Համգի-Փալավան ևն), Չիթունու համոզմամբ, հիշեցնում է Համագասպ Պահլավունուն⁹³, ինչը, սակայն, որևէ կերպ համոզիչ լինել չի կարող: Համգան Արևելոց-Թագավորի որդին է, ամուսնանում է Արևմտայ-Թագա-

⁸⁶ Սասնա ծռեր 1951, 59–61, 204–205: Պատումներից մեկը գրի է առնվել 1926 թ., գավառցի ասացող Հակոբ Նրզելյանից, որն իր հերթին այն լսել է Սասունի Իշխանաձոր գյուղից սերող 115-ամյա Մուխսի Ավդալ Հզբոյանից, երկրորդը՝ 1903 թ., Ալաշկերտի գաղթականներից սերող գավառցի 50-ամյա հեքիաթասաց Սարգիս Հակոբյանից:

⁸⁷ Սասնա ծռեր 1951, 73–74, 84–85, 215–223:

⁸⁸ Համգա (Համգայ/Համգե) անձնանունը հայոց մեջ վկայված է IX–XVI դդ., Հ. Աճառյանի կողմից նշվում են 7 պատմական անձինք [Աճառյան 1946, 27–28]:

⁸⁹ Կանայեանց 1910, Ի-ԻԱ:

⁹⁰ Այլ պատումներում՝ Լորան դաշտ, Լոռա դաշտ, Լեռա դաշտ, Հըռոլա դաշտ, Ռոլա դաշտ:

⁹¹ Սասնա ծռեր 1999, 406: Մի դեպքում հիշատակվում է Ջալալօղլին, այն է՝ ներկայիս Ստեփանավանը պատմական Լոռու տարածքում, որտեղ գտնվող վիթխարի հակառակորդին (Համգա) սպանում է Դավիթը: Տվյալ դեպքում ակնհայտ է տեղանվան նորացումն ասացողի կողմից [Սասնա ծռեր 1999, 415]:

⁹² Չիթունի 1942, 1124:

⁹³ Չիթունի 1942, 42:

վորի դստեր հետ, զուգահեռ առկա են Համգայի ժառանգների կերպարները, որոնին՝ Դերնիկ (Դերենիկ) կամ Տղա-Դերնիկ, դուստրը՝ Գոհարիկ⁹⁴: Հակառակորդների թվում նշվում են որևէ այլ տեղ չհանդիպող կերպարներ՝ Կռալ-Թագավորը և նրա տղան⁹⁵: Վերջում Համգան որդու հետ վերադառնում է Սասուն, ինչով էլ ավարտվում է տվյալ մշակումը⁹⁶, այդպես էլ որևէ բովանդակային հարազատություն չունենալով էպոսի հետ:

Չիթունու ծանուցմամբ, «Համգա Պահլավան» ճյուղի համար հիմք են հանդիսացել Սպարկերտի բարբառով իր գրառած պատումները և սեփական մշակումները⁹⁷: Վերոհիշյալ մոտեցումը լավագույնս գնահատվել է 1975 թ., էպոսի խորագիտակ մասնագետներից Ա. Սահակյանի կողմից, շեշտվել, որ էպոսի մշակման մեջ Չիթունու ներառած զանազան պատումներն ու հեքիաթները իրականում որևէ կապ չունեն բուն էպոսի հետ, «*եթե նույնիսկ ասացողը վկայում է, որ այդ կերպարները Սասնա փանից են*»⁹⁸:

Դրան զուգահեռ Չիթունու մշակման մեջ նշվում է նաև Լոռու-Համգան կամ Լոռա-Համգան, Սասնա Դավթի ավանդական հակառակորդների՝ Շրբղզան-Խորասանի (Շապգոնց-Խորասանի), Օղանի, Դողանի, Պարան-Պոռոշի կամ Պարան-Բըվեթի, Սև-թագավորի, Պարսիկ-Շահի շարքում⁹⁹: Եթե տվյալ հանգամանքը համահունչ է էպոսի այլ պատումներին, ապա Համգա-Պահլավանի կերպարն, ըստ էության, շեղում-շփոթ է և Չիթունու ազատ գեղարվեստական մշակման արդյունք: «Սասնա ծերի» պատումների քննական համեմատության միջոցով իրավամբ գնահատվել է, որ Չիթունին էպոսի յոթ ճյուղ ստանալու համար «*կամ երկարում է միննույն կերպարը... կամ էլ վեպի վերջում, Փոքր Մհերից հետո շարունակում է Սասնա փան սերունդների թիվը զանազան հեքիաթների ու մոտիվների հաշվին*»¹⁰⁰: Ըստ այդմ, առանձնացվել, երկփեղկվել են տարբեր և տվյալ դեպքում՝ նաև միևնույն անուններով հանդես եկող կերպարներ: Վերոհիշյալը միանշանակ համապատասխան է Չիթունու մշակման մեջ ավանդական Համգայի կերպարի երկատմանը:

Մեր խորին համոզմամբ, տվյալ դեպքում, ինչպես Զնչիլ Ղոռանի (Զնճիլ Խոռան) կերպարի պարագայում, առկա է Սասնա պատումներին հատուկ շեղում-շփոթ: Ըստ այդմ, հավանական է, որ «Պարսից պատերազմ» հերոսավեպից սերելով՝ հետագայում «Սասնա ծերին» անծանոթ և ոչ բնորոշ այս կերպարը ներմուծվել է «Բյոռոզի» էպոսից: Մի զարգացում, որն իրապես բնորոշ է բանահյուսությանը:

⁹⁴ Չիթունի 1942, 1126–1128:

⁹⁵ Չիթունի 1942, 1150–1151: Թրք. Kral - «թագավոր», «արքա»: «Դռալ-թագավորի» կերպարը հանդիպում է արևմտահայ ասացողներից գրառված որոշ հայկական հեքիաթներում:

⁹⁶ Չիթունի 1942, 1154:

⁹⁷ Չիթունի 1942, 1125:

⁹⁸ Սահակյան 1975, 76:

⁹⁹ Չիթունի 1942, 977–978:

¹⁰⁰ Սահակյան 1975, 76:

Եզրակացություններ

Քաչալ Համգայի կերպարը և դրվագը կայուն տեղ են գրավում «Քյոոզոլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, ընդամին, որոշ դեպքերում Համգային վերագրվում է հայկական ծագում: Համգայի կերպարն առկա է նաև արևելյան խմբի որոշ տարբերակներում (թուրքմենական և տորոլ-թաթարական): Էպոսի բոլոր տարբերակներում Համգան հանդես է գալիս որպես Քյոոզոլու նժույգի առևանգիչ և հակառակորդին հանձնող, հակառակորդի լրտես-գործակալ Քյոոզոլու խմբում:

Ժ. Դյումեզիլի առաջադրած «կույրի որդու» առասպելային հիմնականաբար համանման տարբերով դրսևորվում է «Պարսից պատերազմ» հերոսավեպում և «Քյոոզոլու» արևմտյան խմբի հիմնական տարբերակներում՝ ակնհայտ դարձնելով առկա ծագումնաբանական կապը: «Պարսից պատերազմ» հերոսավեպում որպես Համգայի բացահայտ վիպական նախորդ է հանդես գալիս Փիսակ-Դատաբենի կերպարը, որի ներմուծումը թուրքական էպոս, ըստ երևույթին, իրականացվել է թուրքալեզու հայ աշուղների միջոցով: Հանձինս «Քյոոզոլի» էպոսի որոշ տարբերակներում հայկական ծագում վերագրվող Քաչալ Համգայի և «Պարսից պատերազմ» հերոսավեպի Փիսակ-Դատաբենի կերպարների՝ ևս մեկ հավելյալ կովան է ի հայտ գալիս «կույրի որդու» առասպելային հիմնականաբար հաստատման համար:

«Սասնա ծռեր» էպոսի պատումներում Համգան հանդես է գալիս Սասնա ծռերի ավանդական հակառակորդների շարքում, մինչև «Քաչալ Համգա» կամ «Լոռվա Համգա», «Լոռա Համգա» և այլ համանման անվանաձևերով: Ըստ այդմ, «Պարսից պատերազմ» հերոսավեպից սերելով՝ հետագայում «Սասնա ծռերի» պատումներում հանդիպող անձանոթ և ոչ բնորոշ այս կերպարը հայոց էպոս է ներմուծվել «Քյոոզոլի» էպոսից:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱԲ - Հայ ազգագրություն և բանահյուսություն

ՀԺՀ - Հայ ժողովրդական հեքիաթներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1985

Գրիգորյան Ռ. Հ., Գեղարքունիք // ՀԱԲ, հ. 14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:

ԳԵԻՈՐԳՅԱՆ 1999

Գևորգյան Ռ. Հ., Լոռի (Տաշիր-Ձորագետ) // ՀԱԲ, հ. 20, Երևան, «Գիտություն», 1999:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1999

Խաչատրյան Ռ. Հ., Թալին // ՀԱԲ, հ. 19, Երևան, «Գիտություն», 1999:

ԽԵՄՉՅԱՆ 2008

Խեմչյան Է. Հ., Իջևան (Ձորոփոր) // ՀԱԲ, հ. 25, Երևան, «Գիտություն», 2008:

ԿԱՆԱՅԵԱՆՑ 1910

Կանայեանց Ս. Մ., Զոջանց տուն կամ Սասնայ ծռեր վէպի երեք փոփոխակ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910:

ՀԱՅԿՈՒՆԻ 1904

Հայկունի Ս., Հայ-քրդական վեպեր // Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Ե: Մոսկուա-Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1904, 1-294:

ՀԺՀ 1-18

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1, Այրարատ, առաջաբանը՝ Ա. Մ. Նազինյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959; հ. 3, Այրարատ (Վաղարշապատ), առաջաբանը՝ Ա. Մ. Նազինյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962; հ. 4, Շիրակ և շրջակայք, նախաբանը՝ Մ. Ա. Մկրտչյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963; հ. 5, Արցախ, բնագիրը և ծնթ. Ա. Մ. Նազինյանի և Մ. Մ. Գրիգորյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966; հ. 6, Արցախ-Ուտիք, բնագիրը, նախաբանը և ծնթ. Ա. Մ. Նազինյանի և Վ. Գ. Սվազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973; հ. 7, Արցախ և Սյունիք, տպ. պատր. Ա. Մ. Նազինյանը և Մ. Ն. Առաքելյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979; հ. 10, Տուրուբերան, ծնթ.՝ Ս. Տարոնցու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967; հ. 12, Տարոն, ծնթ.՝ Վ. Գ. Սվազյանի, խմբ.՝ Ս. Ա. Գևորգյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984; հ. 13, Տուրուբերան, ծնթ.՝ Ա. Ս. Ղազինյանի, խմբ.՝ Ս. Ա. Գևորգյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985; հ. 14, Վան-Վասպուրական, ծնթ.՝ Ա. Ս. Ղազինյանի, խմբ.՝ Ս. Ա. Գևորգյան, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999; հ. 18, Պարսկահայք, առաջաբանը՝ Թ. Հ. Գևորգյանի, խմբ.՝ Թ. Լ. Հայրապետյան, Երևան, «Գիտություն», 2016:

ՂԱԶԻՑԱՆ 1983

Ղազինյան Ա. Ս., Արցախ // ՀԱԲ, հ. 15, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՍԻ 1981

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, խմբ., ներածությունը և ծանոթությունները՝ Ս. Ս. Մալխասյան, Երևան, ԵՊՀ հրատ., 1981:

ՉԻԹՈՒՆԻ 1942

Չիթունի Տ. Յ., Մասունական: «Մասմանց տուն», «Մասմայ ծոեր» կամ «Մասունցի Դավիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դիցազնավեպին եօթը ճիւղին ամբողջական պատմութիւն, հ. 1, Փարիզ, տպ. Արաքս Թօփալեան, 1942:

ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ 1944

Մասնա ծոեր, հ. Բ, Ա մաս, խմբ. Մ. Խ. Աբելյան, աշխատակցությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ, 1944:

ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ 1951

Մասնա ծոեր, հ. Բ, Բ մաս, խմբ. Մ. Խ. Աբելյան, աշխատակցությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ, 1951:

ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ 1999

Մասնա ծոեր, հ. Դ, նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Բ. Հարությունյանի և Ա. Հ. Սահակյանի, Երևան, «Գիտություն», 1999:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 1993

Մասունցի Դավիթ (համահավաք բնագիր), հյուսեց և խմբագրեց Գ. Ա. Գրիգորյանը, պատ. խմբ.՝ Ա. Մ. Նազինյան, Երևան, ՀԳԱ հրատ., 1993:

ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ 1987

Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագրությունները Ս. Ս. Մալխասյանցի), Երևան, ԵՊՀ հրատ., 1987:

ՔՅՈՒՆ-ՕՂԼԻ 1941

Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Գ. Թարվերդյան, առաջաբանը՝ Խ. Ս. Սամուելյանի, Երևան, ԱրմՖԱՆ, 1941:

«ՔՅՈՒՆ-ՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԲՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ 1953

«Քյոռոցլի» էպոսի քրդական պատումները, գրառում, թարգմ. և ներածություն Հ. Զ. Զնդիի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953:

ГАКСТГАУЗЕН 1857

Гакстгаузен А. фон, Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями. Ч. 1, СПб. В типографии Главного Штаба Его Императорского Величества по военно-учебным заведениям, 1857.

CHODZKO 1842

Chodzko A., Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea. London, Harrison and Co., Printers, St. Martin's Lane, 1842.

HAXTHAUZEN 1854

Haxthauzen A. v., Transcaucasia. Sketches of the Nations and Races Between the Black Sea and the Caspian. London, Chapman & Hall, 193, Piccadilly, 1854.

HAXTHAUZEN 1856

Haxthauzen A. v., Transkaukasien. Andeutungen über das Familien- und Gemeindeleben und die sozialen Verhältnisse einiger Völker zwischen dem Schwarzen und Kaspischen Meere, Leipzig, 1856, Georg Olms Verlag, Hildesheim-Zurich-New York, 1985.

GAZIS 1836

Gazis A., Lexikon ellinikon diirimenon eis tomos tris. T. 2 (Z-F). Vienna, Print House of Antonios Benko, 1836 [Faḏḏis A., Ὑεξικόν ἐλληνικόν διηρημένον εἰς τόμους τρεῖς. Τόμος δευτερος (Z-F). Ἐν Βιέννῃ τῆς Αὐστρίας ἐκ τῆς τυπογραφίας Ἀντόνιου Μπένκο, 1836].

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԵՂՅԱՆ 1968

Արեղյան Մ. Խ., Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968:

ԱՀՅԱՆ 1997

Ահյան Ս., Կույր հոր ու իր տառապյալ որդիների առասպելական թեման և Քյորոզին // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 3 (93), 1997:

ԱՃԱՌՅԱՆ 1946

Աճառյան Հ. Յ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 1946:

ԱՃԱՌՅԱՆ 1962

Աճառյան Հ. Յ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 1962:

ՀԱՍԱՆ ՓԱՇԱՅԻ ՀԵՔԵԱԹԸ 1910

Հասան Փաշայի հեքեաթը (Քեօնօղլու հեքեաթներից մեկը): Փոխադրեց Տաճկերէնից Սուրիաս Զահրիեան (Խայաթ), տպարան Ա. Մալխասեանցի, Ալեքսանդրապոլ, 1910:

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ 1947

Մելիք-Օհանջանյան Կ. Ա., Տիրան-Տրդատի վեպը ըստ Փալստոս Բուզանդի, ՀՍՍՌ ԳԱ ՏՀԳ, թիվ 7, 1947:

ՇԱՀԱԳԵԱՆ 1911

Շահագեան Յ., Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, «Արաքս», 1911:

ՉՈՒԱՔԵԱՆ 1998

Չոլաքեան Յ. Մ., Քեասպ. ազգագրութիւն, բանահիւսութիւն: Բ հ., Հալեպ, «Արմէն Գասպարեան», 1998:

ՊԷՐՊԷՐԵԱՆ 1938

Պերպերեան Հ. Ն., Արշակ Բ և Քեօնօղլու: Փարիզ, Գեղ. տպարան Խ. Մաթիկեան (արտատպում «Ապագայ» շաբաթաթերթին սրբագրութիւններով և յանդիմանումով), 1938:

ՌԱՄՄԱԶՅԱՆ 2017

Ռամազյան Ս.Մ., Որդեգրի կերպարը «Քյոռոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը // Արևելագիտության հարցեր, 2017, №13, էջ 272–311:

ՌԱՄՄԱԶՅԱՆ 2018

Ռամազյան Ս.Մ., Վաճառականի կերպարը «Քյոռոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը // Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, №2, էջ 205–219:

ՍԱՀԱԿՅԱՆ 1975

Սահակյան Ա.Հ., «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2009

Վարդանյան Ն.Խ., Հայոց իրապատում հեքիաթը (Ժանրային, տիպաբանական քննություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2009:

ՐԱՖՖԻ 1964

Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, Հայպետհրատ, 1964:

ՔՕՌՕՂԼՈՒ ՀԷՔԻԱԹԸ 1897

Քոռոլում հեքիաթը. Գզիր Օղլիու {Օղլու} և Պոլի Բեկի հետ պատահած անցքերը: Փոխադրեց տաճկերէնից հայերէն Մկրտիչ Տալեանց Աշըգ Ջամալին, Մասն առաջին, Թիֆլիզ, տպարան Մ. Վարդանեանցի, 1897:

ՔՕՌՕՂԼՈՒ ՀԷՔԻԱԹԸ 1904

Քոռոլում հեքիաթը. Դամրջօղլու և Համգա-բեկի հետ պատահած անցքերը: Փոխադրեց տաճկերէնից հայերէն Մկրտիչ Տալեանց Աշըգ Ջամալին, Մասն երկրորդ, հրատ. «Կովկասեան գրավաճառանցի» Զ. Գրիգորեանցի, Տիֆլիս, տպ. Կ. Տավարովիլաձէ, 1904:

ЖИРМУНСКИЙ, ЗАРИФОВ 1947

Жирмунский В.М., Зарифов Х.Т., Узбекский народный героический эпос, ОГИЗ, Москва, Госхудлитиздат, 1947.

КАРРЫЕВ 1968

Каррыев Б.К., Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов, Москва, “Наука”, 1968.

КОРОГЛУ 2000

Короглу, АН Азербайджана Баку, “Сада”, 2000.

DUMÉZIL 1938

Dumézil G., Les légendes de “Fils d’aveugles” au Caucase et autour du Caucase // Revue de l’Histoire des Religions, vol. 117, Paris, E. Leroux, 1938.

BORATAV 2016

Boratav P.N., Köroğlu Destanı. Bütün Eserleri - 6, Ankara, BilgeSu, 2016.

ERGUN 2005

Ergun P., Altay Destanlarında ve Anadolu Türk Masallarında Tastarakay-Keloğlan // Millî Folklor, Cilt 9, Yıl 17, Sayı 68. Ankara, Üç Aylık Uluslar Arası Halkbilimi Dergisi, 2005.

Samvel M. Ramazyan

Institute of Archaeology and Ethnography

KACHAL HAMZA:

A COMMON CHARACTER IN ARMENIAN AND TURKIC EPICS

Keywords: “Sasna Tsrer” (“Daredevils of Sassoun”), “Koroglu” (“Kerogli”) epic, Kachal (Bald) Hamza, “Persian War”, Georges Dumézil.

Our recent studies confirm that the bearers of the Armenian and Turkic epic traditions in the Armenian Highlands were in continuous contact, as a result of which allo-genic (Turkic) characters are revealed in the Armenian epic “Sasna Tsrer” and Armenian personages in “Koroglu” (“Kerogli”) epic. It is obvious that there was a process of bilateral interpenetration of some epic elements.

The article presents an analysis of the character of Kachal (Bald) Hamza in the epics “Sasna Tsrer” and “Koroglu”, which makes it possible to reveal their genealogical roots. In the Armenian epic, Kachal Hamza (Lora Hamza) traditionally appears among the enemies of the brave men (madmen) of Sassoun, mainly as a suitor of Khandut, and in “Koroglu” epic he is a horse thief, and a spy-agent of adversary in the group of Koroglu.

At the same time, in the heroic epic “Persian War” the character of Pisak-Databen appears as Hamza’s obvious epic predecessor, whose import into the Turkic epic was carried most probably through Turkish-speaking Armenian ashughs (singer-poets).

Comparing the characters of Kachal Hamza of Armenian origin (in some versions of “Koroglu” epic) and Pisak-Databen in the “Persian War” heroic epic, we can put another additional argument confirming the framework of the “son of the blind” mythologeme.

Basing on the results of the study, we can conclude that actually originating from the heroic epic “Persian War”, an unfamiliar and uncharacteristic

personage for “Sasna Tsrer” was later borrowed and imported into the Armenian epic from “Koroglu” Turkic epic.

Самвел Мартунович Рамазян

Институт археологии и этнографии

КАЧАЛ ХАМЗА:

ОБЩИЙ ПЕРСОНАЖ В АРМЯНСКОМ И ТЮРКСКОМ ЭПОСАХ

Ключевые слова: «Сасна Црер» («Сасунские удальцы»), эпос «Кёроглы», Качал (Плешивый) Хамза, «Персидская война», Жорж Дюмезиль.

Наши последние исследования доказывают, что носители армянских и тюркских эпических традиций на Армянском нагорье находились в постоянном контакте. На что указывают аллогенические (тюркские) персонажи в армянском эпосе «Сасна Црер» и армянские персонажи в эпосе «Кёроглы». Становится очевидно, что имели место взаимопроникновения некоторых эпических элементов.

В статье представлен анализ персонажа Качала (Плешивого) Хамзы в эпосах «Сасна Црер» и «Кёроглы», что дает возможность выявить генеалогические корни данного персонажа. При этом в армянском эпосе Качал Хамза (Лора Хамза) традиционно выступает из круга противников сасунских удальцов (в основном в роли желающего взять в жены Хандут), а в эпосе «Кёроглы» он является лазутчиком-шпионом противника из группы Кёроглы.

Представляется также наличие с аналогичными элементами каркаса мифологемы «сына слепого», выдвинутого Ж. Дюмезилем, в героическом эпосе «Персидская война» и в основных версиях западной группы «Кёроглы», выявляя очевидную генеалогическую связь. В то же время в героическом эпосе «Персидская война» персонаж Писака-Датабена предстает явным эпическим предшественником Хамзы, чей импорт в тюркский эпос осуществлялся, по-видимому, через тюркоязычных армянских ашугов. Сопоставление персонажей Качала Хамзы, имеющего армянское происхождение (в некоторых версиях эпоса «Кёроглы»), и Писака-Датабена из героического эпоса «Персидская война», выдвигает дополнительный аргумент, подтверждающий обоснованность каркаса мифологемы «сына слепого».

Результаты исследования позволяют сделать вывод, что, собственно, исходя из героического эпоса «Персидская война», незнакомый и нехарактерный для «Сасна Црер» персонаж в дальнейшем был заимствован и импортирован в армянский эпос из тюркского эпоса «Кёроглы».

Ներկայացվել է՝ 06.11.2022,
գրախոսվել է՝ 09.12.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023: